

Պատմության բազահայտումն ու կնքաբարային մարմնավորումը Պ.Ջեյթունցյանի արձակում
Ա. Կ. Ղուլյան

Վերլուծվել են Պ.Ջեյթունցյանի XX դարի նրկու որոշորոշություններին նմիկած՝ «Կլոդ Ռոբերտ Իգերլի» և «Ամենատխում մարդը» վեպերը:

Կլոդ Ռոբերտ Իգերլիի որոշորոշական պատմությունը (մեկը նրանցից, ով անմիջական թե մասնակիորեն մասնակցություն էր ունեցել հայրուր հագարավոր մարդկանց սպանության մեջ, բայց միակը, որ ճանաչել էր իր մեղքը), բազմիցս է գրավել աշխարհի մտավորականության ուշադրությունը: Այն հիմք ծառայեց նաև Պեռ Ջեյթունցյանի վեպի համար: Վեպը լույս տեսավ 1968թ, այն ժամանակ, երբ նոր թափ էր առել միջուկային ատոմային և ջրածնային սպառազինության մրցավազը, երբ միջուկային պատերազմի սկսման վտանգն արդեն սպառնում էր ռոջ քաղաքակրթությանը: Նրա «Կլոդ Ռոբերտ Իգերլի» վեպի հերոսը ամերիկացի նույնանուն օդայուն է, որը գիտակցելով պատասխանատվություն իր մասնակցության համար ավելի քան 200 հազար անմեղ մարդկանց սպանության մեջ՝ հրաժարվեց կանգնել ամերիկացի ժողովրդի առջև իբրև ազգային հերոս:

«Ես այն մայրույն եմ, իր մասին գրել է Իգերլին, որ հրաման արձակեց ռուբ գցել Հիրոսիմայի վրա... Ես չկարողացա մոռանալ այդ արարքը, որն ինձ պատճառեց դաժան տանջանքներ, որովհետև գիտակցում եմ մեղքս»: Նրա ցանկությունն էր, որ իր գործած մեղքը հասարակությունը նույնպես ճանաչի: Սակայն դա չհատարվեց, որով և վերջինս գործեց առավել ահավոր մեղք: Բնականաբար, այստեղ իսկական մարդասպանին պետք էր փնտրել «հասարակության», և ոչ բնավ թիվ 509 հատուկ ավիախմբի քանակցամյա օդայուն Կլոդ Ռոբերտ Իգերլիի մեջ: Արդյունքում Իգերլին հայտարարվեց հոգեկան հիվանդ: Թերևս, կարելի է ասել, այս արարագայում առիթ հանդիսացավ նաև իր նրիտասարդ օդայուն տարօրինակ վարքը. հաժախարհի իր սկզբունքին և ընդդիմանալով հասարակական կեղծ կարծիքին, ցանկանալով իրեն տանջող տառապանքների վրա հրավիրել շրջապատի ուշադրությունն, այլև հասնելու իր գործած մեղազորություն համընդհանուր ճանաչմանը (հետևաբար և ինչ-որ պատժի), այս անգամ արդեն ազգային հերոսը գնում է բոլորովին ուրիշ քայլերի. գորություններ, կողոպուտներ, անկարգություններ և այլն:

Այս «ճարտասույալ գործողությունների» արդյունքում Ռոբերտ Կլոդ Իգերլին շուտով հայտնվում է բանտում, իսկ այնուհետև՝ հոգեբուժական հոսպիտալում: Եվ չնայած վիճակացի փիլիսոփա Գյունտեր Անդերսի (որի հետ Իգերլիի նամակագրական կապը նրկար տարինների

պատմություն ուներ) ընվգումներին՝ հղված նամակներին առ միջազգային մամուլ, նախագահ Քենեդի. գործով քննող դատարան, Իգերլիին բուժող բժիշկներ, ինչպես նաև իշխանություններին և հասարակական կազմակերպություններին ուղղված Իգերլիի դիմումներին, այնուամենայնիվ, վերջինս դուրս չգրվեց հոսպիտալներից:

Նա այդպես էլ պահվեց այնտեղ որպես «կամավոր հաճախորդ», իսկ իրականում՝ որպես կալանավոր: Ձիվկողական իշխանությունների նպատակն ակնհայտ էր. Իգերլիին մեկուսացնել հասարակությունից, խանգարել նրան իր համոզմունքներն արտահայտել, որովհետև այդ համոզմունքների մեջ նրանք միանշանակ տեսնում էին «հակաատոմային սպառազինության քաղաքականություն»: Սակայն թարգման ճշմարտությունը Կլոդ Ռոբերտ Իգերլիի մասին նրանց չհաջողվեց:

«Նրանք շատ ուրախ կլինեին, եթե կարողանային «քերտալ փակել», գրել է Իգերլին:

Նրա անունն արդեն թուրքի շուրթերին էր թե Ամերիկայում, թե Նվորպայում, թե Հիրոսիմայում, ամբողջ աշխարհում: Իգերլիի համընդհանուր ճանաչմանը հատկապես մեծ խթան հանդիսացավ Գյունտեր Անդերսի հետ նամակագրությունը, որն առանձին գրքով հրատարակվեց 1961թ: Այստեղ ըստ ամենայնի տրված էր մարդ-անհատի իրավուն կերպարը, անհատի, որը խորապես գիտակցել էր իր գործած մեղքը, հասկացել իր կողմից կատարված հանցանքի պատասխանատվությունը ու ոչ միայն անցյալի, այլև ներկայի և ապագայի հանդեպ:

Ուշագրավ են նաև կյանքի մասին Իգերլիի մտորումները պատմականի անդամ ճապարհի քահանային գրված նամակում. «...ապրել թեկուզև ամենաթվալ կյանքով, բայց կատարել իր պարտքը՝ օգնել բոլոր մարդկանց, լինեն դրանք կարմիր, սպիտակ, սև թե դեղին, ապահովել նրանից կյանքով, առանց վախի, առանց աղքատության, առանց տգիտության և ստրկության... Դաժանությունը, ատմությունը, բռնությունը, անարարությունը երբեք չեն ստեղծի պայծառ ապագա ոչ հոգևոր, ոչ բարոյական և ոչ էլ նյութական: Դաժառ ապագայի միակ ճշմարիտ և ապագայից ստեղծագործ սերն է, վատահույությունը, նրբայությունը...»:

«Մենք կարող ենք չհամաձայնել առանձին գործերին նպատակադրման հետ, բայց այս դեպքում դա չէ կարևորը, ինձ հետաքրքրողն այստեղ նպատակադրման հասնելու ուղիներն են, գեղարվեստական լուծման տարբեր եղանակները, գրում է Ջեյթունցյանը: Կարևորն այն անասարկելի ճշմարտությունն է, որ ընտելված արտահայտման որոշակի մեկ ձև չունի, ունի միայն որոշակի լսողի՝ հասարակական հիմնական օրինաչափությունների էություն բազահայտումն ու կնքաբարային մարմնավորումը»¹:

¹ «Գրական թերթ», 1973, ընդգծումը՝ բնագրում, N1

«Այս վնայի հիմքում ընկած է մի լեզունդ, որ ծնվել է մոտավորապես թասներորդ դարում, ստեղծագործության յուրովի մոտարում գտել է Ձնյթունցյանը,- ըստ այդ լեզունդի՝ մարդիկ ստեղծել են մի այդպիսի գեղեցիկ գներ, որ տնդնտստեղ կործանել է մի ամբողջ քաղաք իր հազարավոր բնակիչներով:

Կարդալով այս տողները, կարելի է բացականչել. *ինչ լավ է, որ այդպիսի բան չի եղել, ինչ լավ է, որ այդպիսի բան չէր կարող լինել* (ընդգծումները վիպասանինն են):»:

«Իրականում «այդպիսի բան» եղել է,- 20-րդ դարի լեզունդի մասին գրում է ակադեմիկոս Ս.Արզումանյանը,- «Կլոդ Ռոբերտ Իգնրի» վնայը, իր գաղափարական ու գեղարվեստական հիմքով, «այդ բանի» դեմ մարդկային - բարոյական - հոգեբանական պայքարի ինքնատիպ վնայերացում է: Ինչ,- որ առաջվել- լեզունդի պատմություն չի ելուտում վիպասանը, այլ փորձում է տալ աշխարհացունց մի փաստի գեղարվեստական տարեկությունը»:

Պե՛րձ Ձնյթունցյանը իր վնայում մեծ մասամբ օգտագործել է պատմական փաստեր և իսկական փաստարդյոքներ, որոնք հիմք են ծառայել ժամանակի հասարակայնության կենսական խնդիրներին նվիրված մի լեզունդի ստեղծման համար, որ հերոսը «ակամա վերածվեց մարդ-պտուտակի, բայց ի տարբերություն ուրիշների, նորից վերափոխվեց մարդու»: Ձնյթունցյանն այստեղ վարպետորեն իրար է միախառնել իրականն ու ֆանտաստիկան, պատմականն ու գեղարվեստականը, վնայերացրականն ու պայմանականը, որ միասին գործում են գեղագիտական բազմաբնույթ և բազմազան բնավորությունների տեղ հերոսները՝ (Կլոդ Ռոբերտ Իգնրին, նրա հայրը, Լիլին, Գյունտեր Անդերսը և այլք) և վնայացական սիմվոլներ (Նապոլեոն Բոնապարտը, նախարար Վիլիելմ Իսթը, Ատոմային և Ջրածնային Ռուբերի Վայրերը և ուրիշներ), որով և կրկին հաստատվում է եծդինակի գեղագիտական ու քաղաքացիական հավատամքը՝ հասարակության հանդեպ անհատի ունեցած պարտքի դիտարկությունը: Պայմանականությունը վնայում նույնպես պատահական չէ: Տ.Արզարյանի մեկնաբանությամբ, Ձնյթունցյանը վնայում անախրոնիզմով օգտագործել է ոչ որպես ռեակորման միջոց, այլ իբրև «վիպական կառուցվածքի կարևոր սկզբունք, որը կոչված է առավել ցայտուն բացահայտելու վնայի գաղափարական կոնցեպցիան»²:

Դժվար ու տածմանկիր է Ձնյթունցյանի հերոսի անցած ուղին՝ ազգային հերոսից մինչև «խելագար», դատապարտված մշտական հալածանքի, ուրի, որը ձգվում է անհատական ինքնագիտակցությունից

(մեղրի գզգզումից) մինչև կյանքի իմաստի խորապես գիտակցումը: Նա ինքնագնումի, ինչպես նաև հասարակության դեմ պայքարի միջոցով հասնում է ինքնաճանաչման՝ հոգեբանական այդ բարդ գործընթացի արդյունքում դառնալով մարդկային - բարոյական վերածնության հիմքը:

Անհատ և հասարակություն, բանական մարդ և մարդ-պտուտակ: Մեղրի կոպիլերսի գիտակցմամբ ինքնաճանաչման հասած անհատն ընդդեմ ռոբագործ հասարակության: Ահա այն առանցքը, գաղափարը, որը գեղարվեստորեն մարմնավորվելով վերածվում է մի գզգզուտացող ճիչի՝ ընդդեմ բռնության ու անարդարության, ռոբագործության և աշխարհամոռն քաղաքականության:

Նկարագրված վնայում գտել է կենսական նյութը, որի հենքի վրա կառուցվել ստեղծագործությունը և տալով նրան գեղարվեստական իմաստավորում բարձրագույն է արդիական հնչեղություն ունեցող ինքնահարց: Անդրադառնալով կենսական նյութի և գրականության փոխհարաբերությանը, Ձնյթունցյանը գրում է. «Ինձ թվում է, որ մեր արձակ կենսական նյութի հետ հաճախ կապվում է մի կարճ և ուղիղ գծով. նյութը մինչև գրականություն հասնելը մեծ մասամբ չի իմաստավորվում, փոխակերպման չի ենթարկվում հեղինակի կողմից, չի «հարմարվում» գրողի սեփական տեմանկյանն ու մեկնաբանությանը և, ի վերջո, չի վերածվում պարզելի: Ստացվում է, «կյանք» ինչպես որ կա»: Չկա արվեստի մյուս՝ երկրորդ աստիճանը՝ կյանք ինչպես ինքը ևս տեմանում, և հաջորդը, ավելի բարդը ինչպես նա ընկալում կյանքը և ինչ նա մտածում այդ մասին»:

Նորավի շատ խորն է Ձնյթունցյանի հերոսի «այդ կյանքի» ընկալումը: «Ես կբաժանվեմ: Ես կդառնամ երկու հոգի: Մեկն իմ մեջ, մյուսն ինձանից դուրս: Տամկետ և Դեմ կիկոսն»: Ձնյթունցյանի հերոսը հանգանքը կատարելուց հետո, փորձում է մարդ - պտուտակից կրկին դառնալ դեպի իր «ես»-ը, իր անհատական աշխարհն ունեցող մարդ: Մինչդեռ հասարակությունը՝ մինչ այդ «ազգային հերոս» հռչակած Իգնրիին այդ պահին որակում է «խելագար» ու իբրև հոգեկան հիվանդի մեկուսացնում է իրենից: Կատարած հանգանքի, մեղրի, պատասխանատվության գզգզումը կլոդին ակամա «դարձնում է» Հիրոսիայի գոհերից մեկը: «Դուք ես այնպիսի գոհ եք, ինչպիսին և մենք» - առում են ճառագայթային ախտով հիվանդ երևտուն աղբիկները, նույնն է առում նաև Գյունտեր Անդերսը, նույն միտքն է հաստատում նաև Նապոլեոն Բոնապարտը, որը վնայում հանդես է գալիս որպես մի հավաքական խորհրդանիշ՝ իր մեջ ներառելով բոլոր դարերի բռնակալներին և ռոբագործներին՝ Ներոն, Նոլիսու կնսար, Թալեսար, Հիսլեր, Ստալին... «Դու կատարող ես...քեզ ոչ որ իրավունք չունի մեղադրելու: Դու ինքը ել չունեն (ընդգծումը՝ Ա.Դ.): ...Եթե յուրաքանչյուր կատարող մտածի, աշխարհում ոչինչ չի կատարվի», -վերստին մարդկայնացման ուղին բռնած մարդ-պտուտակին առում է

² Ս.Արզումանյան, «Խորհրդահայ վնայը», Երևան, 1990, էջ 75

³ «Երանականակից հայ արձակը», Հոգեվանդի ժող. 1981, էջ 30

Բռնապարտը, թեև վերջինս նույնպես դատապարտում է պատերազմը. «կեցցե խաղաղությունը, կորչի պատերազմը»:

Վելպու՝ բացառիկ ուժով է կառուցված Նապոլեոն Բոնապարտի և Կլոդ Իգերլիի նրկխոսությունը.

«Բռնապարտը մոտեցավ լուսամուտին ու դուրս նայեց: Ու ներքա դադարից հետո, առանց շրջվելու, հանկարծ ասաց.

–Մեղը են...

–Ովքե՞ր, Ձերդ մեծություն:

–Այդ քաղաքի բնակիչները, – ծայնից երևում էր, որ հուզված է:

–Ես երգում եմ այն օրը, երբ կզաղարներ պատերազմով, իրար սպանելով...

–Իսկ երբ,–համարձակվեց հարցնել Բոբը...

–Պատերազմը չի լինի, եթե աշխարհը նվաճած լինենք»:

Նապոլեոն Բոնապարտը Հիրոսիմայի և Նագասակիի ողբերգական ճակատագրից հետո Ատոմային և Ջրածնային Ռումբերի Հայրերի բանավեճի միջոցով ձգտում է գտնել «ճշմարտությունը»: Ջրածնային Ռումբի Հոր կարծիքով՝ համաշխարհային նվաճման հասնելու համար պետք է անտեսել «ամենատարբեր գզագուն» անգամ, քանի որ «փոխզե բոլորովին էլ օբյեկտիվ չափանիշ չէ», այն «բարոյական չափանիշ է, բայց ոչ գիտական»: Նրա կարծիքով գիտնականը «երեք գիտական գաղափարի նայի բարոյական ակնոց» ներով, նա կխճճվի ոչ միայն որպես բարոյացետ, այլ նախ և առաջ որպես գիտնական»:

Ջրածնային Ռումբի Հայրը մեծում է պացիֆիզմը, պատերազմը ներկայացնում որպես «համաշխարհային զարգացման հնարավոր ձևերից մեկը»: Ձիսվորը, ըստ նրա, պետք է լինի նախնային և հնազանդ, և հերքելիկոս է այն զինվորը, ով կարող է ունենալ «սնփական կարծիք», ով կզգտի առաջնորդվել իր մտքերով ու զգացումներով: «...Այն գիտնականը, որ պատերազմը չի ընդունում որպես համաշխարհային խնդիրների լուծման միջոց, իրենի տրամաբանությամբ, դառնում է մեր թշնամին»:

Ատոմային Ռումբի Հայրը հակադրվում է Ջրածնային Ռումբի Հորը՝ իր տխրահռչակ փորձով խորհրդանշելով գալիք պատերազմի աղետո ողբ մարդկության համար. «Թեև գիտությունն ինքնին անտարբեր է չարին ու բարուն, օրինականությանն ու անօրինականությանը,–ասում է նա,–սակայն գիտնականը իրավունք չունի անտարբեր լինել... Ամենամեծ վտանգը, որ այսօր սպառնում է մարդկությանը, կույր մոլեռանդությունն է... Մոլեռանդություն գոմարած ժողովրդ, գոմարած անտարբերություն. մա մարդկության կործանման ամենատրդիկ ճանապարհն է»: «Հիմա, երբ մեզ սպառնում են տնխնիկայի հազարավոր ծուղակներ և մարդու մեքենայացումը,– իր միտքը զարգացնում է Ատոմային Ռումբի Հայրը,– մենք պետք է առավել

քան երբեք պահանջենք անձի ազատություն և ոչ թե կույրուն ենթարկվենք այն ամենին, ինչ սովորական է կամ համարվում է ճիշտ ու կասկածից վեր: Մենք պետք է մտածենք մարդու մասին»: Ատոմային Ռումբի Հայրը տալանապում է մարդկության ապագայի համար. «Ինձ վախեցնում է մարդկանց անտարբերությունը, նրանց ոչխարային հնազանդությունը: Ես վախենում եմ, թե մարդիկ բնավ չեն հասկանում այն վտանգը, որով հղի է մեր դարը: Վախենում եմ, որ չափազանց ուշ հասկանան...»:

Սակայն վերջում, այնուամենայնիվ, հաղթում է Ջրածնային Ռումբի Հայրը: Ատոմային Ռումբի Հորը դատապարտելով մաշվան և բորբոքված աշխարհի առավել էֆեկտիվ միջոցներով նվաճելու տնխնայ Նապոլեոն Բոնապարտը բաց է անում Ջրածնային Ռումբի Հոր ճանապարհի սանձազննելու նոր պատերազմ: Նա արդարացնում է Ռոբերտ Իգերլիի հանցանքը: Դու զինվոր ես,– Իգերլիին ասում է Բոնապարտը՝ իր միտքը հիմնավորելով այսպես. «Առաջադիմության համար միշտ զինվորներ են պետք...»:

«Ես հերոս չեմ, ես հանցանք եմ կատարել, ես սպանել եմ 200 հազար մարդ», – ընդդեմ Բոնապարտի և բոլոր նվաճողների հնչում է Ռոբերտ Իգերլիի ծայնը:

Հիրավի, որքան ուժգնանում է «հասարակության» ճնշումը, այնքան ավելի է սաստկանում հերոսի պատասխանատվության զգացումը, և իր ներաշխարհում անընդհատ բորբոքվող հոգեբանական ճգնաժամը հետզհետե մղում է ինքնաբերականության, որը սակայն կանխվում է Անդերսի նամակի շնորհիվ: Նրա ընկերը Ջո Մթիբորիքը, որը նույնպես նույն հանցանքն էր գործել առումային ժուժք գեղեցիկ Նագասակիի վրա, նահանջում է՝ խոստովանելով իր անգործությունը հասարակության կամքի դիմաց. «Ճիշտ է, Բոբ, բայց ես վախկոտ եմ: Հասկացիր, դու պարտավոր ես հասկանալ, որ ես վախկոտ եմ: Ես ուզում եմ լավ ապրել... Փառքս ինձ դուր է գալիս... Մի մեղադիր, Բոբ... Աշխարհի բնականալ... Չէ որ այս բոլորը... մարդկային բաներ են... Ես չեմ առարկում, քո արածն էլ է մարդկային... Ես նույնիսկ նախապես եմ քեզ, բայց... Ինձ երբեմն դուր է գալիս, որ ես մենակ եմ մնալու... Ես ստույգ եմ այդ ստոր մտքից... Ես ինձանից եմ վախենում... հանկարծ մի օր ես էլ խզի խայր գգամ»...***

Եվ հասարակությունը, որ սկզբում անվերջ միլիթարում էր, ներշնչում, հուսադրում («Դու կատարող ես, քեզ ոչ–որ իրավունք չունի մեղադրելու, դու ինքը էլ չունես» կամ «ճարճ գոհեր են, իսկ գոհեր միշտ նվել են և կլինեն: Նրանք հերոսներ են, ամենախաղաղական հերոսներ»), արդեն ինքնաճանաչման հասած Իգերլիին սկսում է հալածել: Իսկ նրա ինքնաճանաչող խոստովանությանը, «ես հերոս չեմ, ես հանցանք եմ կատարել, ես սպանել եմ երկու հարյուր հազար մարդ», հասարակությունը պատասխանում է ոստիկանների ծնծով և

բանտարկությամբ: Սակայն ի տարբերություն Ջոյի, Իգնովիսն ամենայն արժանապատվությամբ է տառնում բոլոր հալածանքները: Նրան նույնիսկ արձան են կանգնեցնում, իսկ իբր բուժելու նպատակով նստեցնում են տիեզերանավ և արշավում Թյունիկ մոլորակ:

«Թորը նայեց խցիկի պատուհանից:

Հողը դեռ երևում էր: Վերջին շերտը: Ու նայելով այդ հողին, որի վրա ապրել է տարիներ, նա չէր կարող չգտնել իր կյանքի մեծագույն սխալը: Որովհետև ես մի րոպե, ու հողն արդեն չի երևա, այն միակ ամուր և հուսալի հենարանը, որին դեռ կարելի է վստահել և խոստովանել: Ես մի րոպե ու վերջ, ուշ կլինի:

Բո կյանքի մեծագույն սխալը ոչ թե այն էր, որ մասնակցեցիր պատերազմին, այլ այն, որ մասնակցեցիր առանց մտածելու:

Ոչ թե այն, որ համաձայնեցիր ռուբը գցել, այլ այն, որ համաձայնեցիր առանց մտածելու»:

Բորը չի դադարում ինքնագնահատել, որի միջոցով և հասնելով իր «ես»- ի բացառակ բացահայտմանը, նա արդեն իրավունք է վերապահում մեղադրել - առաջին հերթին հասարակությանը, այն հասարակությանը, որի կամա, թե ակամա գոհն է դարձել ինքը:

Թյունիկ մոլորակում, ուր շարունակվում է դեպքերի գորգացումը, ավելի տեսանելի է դառնում Ձնթյունցյանի ընտրած պայմանականությունը: Ելնելով Իգնովիսի կենսագրական փաստերից, Թյունիկի մոլորակն այստեղ խորհրդանշում է այն հասկերթվածական հուսովիտյունները, ուր նրկար տարիներ, ինչպես վերում նշեցինք, պահվել էր իբրև «կամավոր հաճախորդ», ինչպես նաև Իգնովիսի հոգեկան ու բարոյական որոնումները:

Այնուամենայնիվ, կյոդը կարողանում է իր մեջ ուժ գտնել և հաղթահարել բոլոր դժվարությունները: Լավատեսությունն, ի դեպ, գերիշխում է Ձնթյունցյանի գրեթե բոլոր ստեղծագործություններում: Նա վերադառնում է Թյունիկից՝ կատարելու համար իր պարտքը մարդկության հանդեպ:

«Ես վերադառնում եմ երկիր, վերադառնում եմ քսաներորդ դար: Ինձ հեն է նաև կինս, - առում է կյոդ Ռոբերտ Իգնովիս, -...Մենք պիտի աշխատենք և վատասկենք մեր համապագայի հացը: Մենք պիտի վարենք մեր հողամասը և աճեցնենք պլանդոր, դդուր և կարտոֆիլ»:

Պերը Ձնթյունցյանի «կյոդ Ռոբերտ Իգնովիս» տպագրվեց հինգ անգամ՝ հայերեն, լիտվերեն, բուլղարերեն, երկու անգամ ռուսերեն, բարձր գեանատվեց երթմանի միտքենական մամուլում, սակայն, չնայած այս ամենին, հայ քննադատների կողմից առժամանակ կարծես «անարժագանք» մնաց: «Վեպը, որի մասին գրում եմ, տարօրինակ ճակատագիր ունի,- իր գրայտականում գրում է Ար. Գրիգորյանը, -... Ես անդրադառնում եմ այս

վեպին, որի գրական ճակատագիրն ինչ որ տեղ նույնիսկ անհանգստության տեղիք է տալիս... Սա բարդ ստեղծագործություն է և իր այդ բարդության մեջ մի փոքր անսովոր, հետաքրքիր իր գեղարվեստական ստորկետությամբ, գրական մտածողությամբ, և առաջին հայացքից կարող է դառնական ավանդները հեռու թվալ: Բայց դա թվում է միայն, որովհետև Ձնթյունցյանի վեպը, անկասկած, հիմքում կապված է ոչ միայն արդի, այլ «հին և բարի» ռեալիզմի դասական ավանդներին հետ»:

Վեպի շուրջ ստեղծված »թության« պատճառ հետզհետե կարծես դառնում է պարզ: Ս.Սարիկյանի հետ երկխոսության մեջ, անդրադառնալով հայ վեպի ներկա վիճակին, նրանում համամարդկային ու համաշխարհային բնկման պոթրման, Հր.Սաթևոսյանը այս համատեքստում հատկապես ընդգծում է Պերը Ձնթյունցյանի դերը իբրև »ամենաներգրական արձակագիր«... «Պերը Ձնթյունցյանը ոչ դիվտանտ է, ոչ էլ մանավաճ նմանարկող,- առում է Հր. Սաթևոսյանը,- իր սերնդի մեջ Ձնթյունցյանը թեևս ամենաներգրական արձակագիրն է, բայց նրա «կյոդ Ռոբերտ Իգնովիս» ստիկիացիա է՝ այն պարզ պատմառվ, որ վերցված իրականությունը հեղինակին ներկայացել է կենսական դիմադրություններից զրկված վիճակում: Այդ իրականության մեջ արդեն չի եղել այն ներբորդական - անհրաժեշտը, այն ավելորդը, այն անտեղին, ինչը գուցե չներմուծվեր էլ վեպ, բայց հեղինակի մեջ ուղեւուծում էր լինելու»:

Ս.Սարիկյանի կարծիքով կյոդ Իգնովիսի պոթրման, որը համաշխարհային պոթրման է՝ արտացոլում է խզճի բախումը 20-րդ դարի կատաստոֆիկ իրադարձություններին, «նրա էթիկական - փիլիսոփայական մեկնակետը կարող է զբաղեցնել նաև հայ գրողին», բայց, եթե Ձնթյունցյանը «երկի փիլիսոփայական և հոգեբանական նստվածքները շաղկալներ հայ ժողովրդի պատմական ճակատագրի փորձով, այսինքն համաշխարհային ու համամարդկային բնկեր ազգային հոգեբանության մեջ, թերևս չէր լինի այն խզումը, որ առկա է ձևի պայմանականության և մտադրության գեղարվեստական լուծման մեջ»:

Այս պարագայում, սակայն (հայ գրականության մտադրության մեջ համաշխարհային համամարդկային բնկման ղեկարում), միևնույն է, կլինե՛ր նույն խզումը: Այնպես, որ Ձնթյունցյանը իրավացի է վարվել, որ վեպի հոգեբանա - փիլիսոփայական նստվածքները շաղկալել է նույն Իգնովիսի ճակատագրի փորձով: Ճշմարիտ է նկատել Հր. Սաթևոսյանը, որ «հայ գրականությունը մտադրության այսքան անշեղ իրազման մի այլ նրկ չունի: Այս իմաստով «Իգնովիս» կատարելություն է, և ինչքան էլ տարօրինակ թվա՝ «պզում» բացահայտվում է և ենթադրյալ կատարելության մեջ: Հեղինակի կամքը սլանում է

⁴ Ար. Գրիգորյան, «Երբ տարով ուշացած գրայտություն», Գրական թերթ, N 37, 1970թ

անօգ-անկանք տարածության միջով և վայրէջք է կատարում ճիշտ այնտեղ, ուր նախանշել էր հեղինակը⁵:

Մեքենայով տեղայնացված չափանիշները և գրականության նորարարությունը դիտելով «խամագայիների և համաշխարհային բնկման խաչմերուկում», Պերճ Ջնյոնցյանը իրավագիտուն հակադրվում է իր քննիմախասներին. «...Երկու գործերում էլ («Լյուդ Ռոբերտ Իգերլի», «Ամենախախտ մարդը» Ա.Ղ.) ինձ չի հետաքրքրել գործողությունը՝ վայրը, աշխարհագրական և պատմական ճշգրտությունը»⁶:

Մի խոսքով, Ջնյոնցյանին այս վնասում հետաքրքրել է համաշխարհարային ասպարեզում տեղի ունեցող մաթեմատիկային նոր հարաբերությունները, մարդու հոգեբանա-փիլիսոփայական մեկնակետը «խամաշխարհային խաչմերուկներում», որով և փիլապանը մի ուրույն վարպետությամբ տվել է անհատի, անհատի ամբողջականության և ամբողջականությունից ազատագրման, հասարակության հանդեպ պատասխանատվության պարզեցնող գեղագիտական պատասխանը և Հր. Մաթևոսյանի խոսքերով Ջնյոնցյանի «Լյուդ Ռոբերտ Իգերլի» վնասը «խմացությունների շքերթ է, ինչը որ վերաճում է ոճավորման»։ «Նեղիսանկ անընդհատ բերում է իր խմացածը։ Նեղիսանկ ամեն ինչ գիտի։ Նեղիսանկը միայն չգիտի, թե ինչ չգիտի և չխմացած աղի ինչն էր յուրացրել, հաղթահարել, ճանաչել փորձելու»⁷:

«Լյուդ Ռոբերտ Իգերլի» վնախի հետ բազմաթիվ կողմերով կապված է «Ամենախախտ մարդը» վիպակը։ Թե Լյուդ Ռոբերտ Իգերլին, թե այս վիպակի հերոս Ռոբերտ Ստրատուդը միևնույն ճակատագրի յուրովի խոսացումներն են, կենսագնման միջոցով ինքնաճանաչման հասած անհատ, անհատ և հասարակություն, հասարակության ճնշում և քննդեմ դրա անհատական պայքար՝ հանուն սեփական «են»-ի գոյատևման...։ Երկու վնասներում էլ պատմավավերագրական հարուստ նյութ ունեցող Ջնյոնցյանն, ըստ ամենայնի, գիտակցաբար խոստովանում է «ծայրահեղ հավատախոթյունից»։ «Իրական են թե հերոսը՝ Ռոբերտ Ստրատուդը, թե նրա շուրջը կատարվող բոլոր դեպքերը»- վիպակի յուրովի մուտքում գրում է Ջնյոնցյանը և շարունակում. «...Նեղիսանկ սկզբում այնքան հավատարիմ մնաց փաստին, որ վավերականությունը դադարեց հավատ ներշնչելուց և դարձավ հեղիաբ։ Այդ ժամանակ հեղիսանկը դիմեց հակառակ քայլին, գրեց ժամանակակից հեղիաբ»⁸:

Ինչպես նախորդ վնասում, այնպես էլ այստեղ նկարագրությունը պայմանական է և այդ պայմանականի ու իրականի միաձուլմամբ էլ որոշվում է ստեղծագործության ինքնատիպությունը։ Վիպակում որքան պայմանական են սովորական տասներկու տալմարդիկ, թագավորը, մտապատկերները և այլքը, նույնքան իրական և բնական է Ստրատուդի և Գեայի անկեղծ գրույցը, Ստրատուդի ապրումները և այլն։ Վիպակի սկզբի էջերից էլ արդեն ավանա գագափում է դեպքերի մոտադրուտ որոշեցվածքն ընթացքը։

Ստրատուդ, որ կյանքում ինքն էր անընդհատ պաշտպանության կարիք գգացել, այժմ պետք է կռվի Տղամարդ ծննդի հետ՝ սիրած աղջկան՝ Գեային անպատկառությունից փրկելու համար։ «Ես խնդրում եմ... ինձ մի կործանիր...» առում է Ստրատուդը. մեկ է, ես այդ փողերը պիտի վերցնեմ... մեղադրեմ ես... դու հո չես կասկածում, որ վերցնելու եմ... Ես ուրիշ ճար չունեմ... Ուզում եմ, ես քեզ հետո փող տամ... կրկնապատկիկ տամ... Ջրի աշխատեմ քեզ մոտ... Ձմեռալ համար փայտ ջարդեմ... Բայց փողերը տուր»։ Հոգեբանորեն խորն է կատարված այս երկխոսությունը, երկու յուրահատուկ բնավորությունների անխտասփելի բախումը. մի կողմում «Երջանկության» ձգտող և այդ պատճառով իր սիրելցային ու իրեն անարգողի առջև աղաչանքով նվաստացող Ստրատուդ, մյուս կողմում իր ուժով հոխարանող ու արհաբամահոտ պտկվածքով դիմացինին նվաստացնող հավասակար։ Վիճաբանության վերջում, երբ Տղամարդ ծննդը արդեն կարող էր խնդրել իրեն, Ստրատուդ, այլընտրանք չունենալով, ատորճանակի կրակոցով սպանում է նրան. «Նա կրակեց ոչ միայն ապրելու բնագոյից, այլև այն բանի համար, որ իրեն ստիպել էին նվաստանալ։ Նա, որ ամբողջ կյանքում էր նվաստացել։ Բայց նվաստացել էր անգիտակցորեն, աննկատ։ Իսկ հիմա՝ իր աչքերի տեսք»։

Եթե նախորդ վնախի հերոսը՝ Իգերլին հասարակության կողմից մեղադրվում էր «մեղքի կոմպլեքսով» տառապելու» մեջ, ապա Ստրատուդի մոտ հայտնաբերում է «անկատարելության կոմպլեքս»։ Ստրատուդին մեղադրողներն իրենց գարնանքն են հայտնում, որ անգրագետ լինելով՝ հանդերձ՝ մեղադրյալը գնացել է ազնվության. «Անգրագետ լինել և ազնվություն գործել», վերավորվեց Առաջին առնետակալը, և այդ նորությունը խորապես ցնցեց նրան։ «Օհո, դա արդեն հանդգնություն է։ Այդ դեպքում նրա ազնվությունը բացատրվում է անկատարելության կոմպլեքսով»։ Ստրատուդը, սակայն իր արարքի մեջ մեղաագործություն չի տեսնում, հետևաբար և չի գգում առաջխարանի կարիք։

Բոք Ստրատուդը դատապարտվում է մտապատմի, այնուհետև՝ ցմահ բանտարկության։ Եվ ինչպես վավերականությունն է փաստում, նա երբեք չի տեսել ինքնաբիտ, երբեք չի նստել մեքենայի դեմին, փողոցները, որով անցել է նա ժամանակին, լուսակիր չունեին դեռ։ Բանտը տառացիորեն ներծծել է նրա

⁵ Երկխոսություն, «Գրական թերթ», 1974 թ. N 19

⁶ Պ. Ջնյոնցյան, Ստում, թե հաշտեցում։ Չափանիշ։ «Գաղտն», 1968, N 8

⁷ Երկխոսություն, «Գրական թերթ», 1974 թ. N 19

⁸ Պերճ Ջնյոնցյան, Կատակերգություն առանց սանսակիցների, Երևան, 1975

գոյությունը: Բանի-բանի տարիներ է անցկացրել մենավոր բանտարկւոյում: Ավելի, քան որևէ մէկը 20-րդ դարի ամբողջ պատմութեան մեջ: Նա կենսաբան երբեք հեռուստացոյց չի տեսնել:

Բայց Ստրաուդը, թե՛ն բանտարկվում է, սակայն, այնուամենայնիվ, նա մեկուսացված չէ արտաքին աշխարհից: Հոգին բզկտող իր միաշնամբությունը հաղթելու համար Ստրաուդը ստեղծում է մտապատկերներ, որոնց հետ զրուցելով՝ յուրովի վերացնում է բանտ-արտաքին աշխարհի անցյալները: Մտապատկերներում հերթով նրան այցի են գալիս տնային խալաթն ու մաշկները հագած մայրը, ուրիշի հետ ամուսնացած և Ստրաուդին արդեն մոռացած Գնան, Տղամարդ ծնողը:

Երբորդ դասարանի կրթություն ունեցող Ստրաուդը իր վերջին ցանկությամբ բանտում գիրք կարդալու թույլտվություն է խնդրում: Բանտային իրավիճակում նրան ընձեռնում է ստեղծագործական աշխատանքի հնարավորություն, որի միջոցով Ստրաուդը ձգտում է հասնել ներքին ազատության: Այդ հնարավորության շնորհիվ ի չիք են դառնում իր խոլի մեղ պատերի, ազատ-անազատ մինչ այդ գերիշխող պայմանականությունների սահմանները: Բանտի չորս պատերի մեջ կիսազրգեւտ Ստրաուդը դառնում է աշխարհահեղափոխ գիտնական: Հայտնագործելու իրավունքը նրան «դարձնում է» ամենաազատ մարդ: Բայց և ամենատղիւտը:

Ձեռնարկային այստեղ հաջողվել է հասնել իր գեղագիտական իդեալի՝ գազարնակնոթին՝ կերտել նման յուրօրինակ իրադրություն. բանտային պայմաններում՝ ազատություն և ազատության պայմաններում՝ ազատագրվություն: Միմյանց հակադիր կողմերում կանգնած են Ստրաուդն ու թագավորը, երկու վարպետներն կերտված կերպարներ, որոնց հակադրությունտակալին ստեղծվել էր նրանց ծննդյան պահից: Նրանք տարեկիցներ են և ծննդյան նույն օրն էլ որոշվել էր նրանց ճակատագրերը. մեկը դարձել էր հանցագործ, մյուսը՝ թագավոր: Առավելությունը, սակայն Ստրաուդի կողմն է, քանզի, թե՛ն կալանավոր է, բայց ունի անվանաձեռն մտքի և մտածողության ազատություն, մինչդեռ իր հեղուտյան՝ թագավորը, որ անսահմանափակ հնարավորությունների տն է, այսուհանդերձ, սիստեմատիկ կաղապարված է իր հնարավորությունների և ազատության մեջ. գերին է իր իսկ հեղափոխ օրենքների: Նա, որ մինչ խոր ծնողություն անվերջոյ ապրելու համար հրապարակել էր մանիֆեստ իր մահից հետո միապետությունը վերանալու և երկիրը հանրապետություն դառնալու մասին (ինչի շնորհիվ անսպասելի ձեռք բերեց մեծ ժողովրդավարություն), որ սխմել էր գրագով փիլիսոփայությամբ և արվեստներով («որովհետև հասկացավ, որ ամենահեշտ և ամենամաղելի

գրագովները դա է»), հանկարծ ամեն ինչ տակնուվրա է լինում, երբ առնում է Ստրաուդ-գիտնականի բանտում գտնվելու լուրը, խախտվում է հոգեկան անգործը: «Միայն նա գլխի ընկավ այդ հարցի ամբողջ խորությունն ու լուրջ վտանգը: Որովհետև այդ վտանգն ամենից առաջ ուղղված էր հենց իր դեմ»: «Գիտնական. Բանտում: Հորս պատերի մեջ»,- միաժամանակ գարմառնում ու գայրառնում է թագավորը Առաջին մինիստրի գեկուցումից:

–Ուրեմն, ինչ է դուրս գալիս, Առաջին մինիստր,- էլ ավելի մտալվեց թագավորը:- Դուրս է գալիս, որ նա ... ազատ է:

–Նա ինքն է գտել իր ազատությունը: Ինքն է ձեռք բերել: Անկախ ծեր օրենքներից ու վեհաժողովից»,- լինում է պատասխանը:

Թագավորն անմիջապես հրամայում է ոչնչացնել Ստրաուդին: «Այնպես, որ հետքն անգամ չմնա: Միայն այդ ձևով կարելի է նրա ազատությունը խլել»: Սակայն նա նույնիսկ այնքան ազատություն չունի, որ սպանել տա կամ ազատի Ստրաուդին: Թագավորին թվում է, թե վերջապես գտել է ելք՝ Ստրաուդը պետք է մեռնի իր բնական մահով, ինչի համար բավական է խլել նրանից թշուրմունքը: Սակայն այս փորձն էլ է անցնում ապարդյուն: Վերջում թագավորը որոշում է ազատ արձակել ծերունի Ստրաուդին: Այս քայլը թագավորին թվում է չափազանց խոհեմ, քանի որ համոզված էր, թե կալանավորը ազատ, նոր պայմաններում արդեն կզաղարի ինքը լինելուց:

Ներմուտ համեմատյալաբար, անկախ իր որոշումից, պետք է նախորդը իմանա, որ եթե կալանավորին հանկարծ ներում չնորքիվ, բանտից դուրս ինչ կանի արդյոք: Տեսնենք պատրաստ ես ազատության, Ստրաուդ:

Ես կկազմակերպեմ գիտական լաբորատորիա, - հանգիստ և գործնական պատասխանեց կալանավոր Ստրաուդը,- իր տնակի մեջ՝ ուսումնական և գիտահետազոտական մի ինստիտուտ, որ կզբաղվի թշուրմունքի գնեմտիկայի, հոգեբանության, պարոլոգիայի և թերապիայի հարցերով:

Այնուհետև՝ երազելով շարունակում է աշխարհահեղափոխ գիտնականը. «Մենք ապրելու ենք աշխարհի քաղաքի ծայրամասում...: Ինձ կոչվում են քաղաքի ամենածայրի տան բնակիչը... Մենք պիտի աշխատենք և վատառկենք մեր հանապազօրյա հացը... Մենք պիտի վարենք մեր հողամասը և ածենենք պովոդոր, դրոմ և կարտոֆիլ...»: Ստրաուդ-թագավոր հակադրության շարունակություն է Ստրաուդ-բանտապետ հարաբերությունը: Մարդկային քաղաքակրթությունից դուրս, իր ինտելիկտուալ ազատության մեջ գտնվող Ստրաուդին բանտապետը ամեն գնով փորձում է ընտելացնել սովորական կյանքի կառններին և ամեն անգամ մեծ ցավ է գգում, տեսնելով իր անգործությունը Ստրաուդի նվաճած ազատությունը խլելու, նրա անկոտրուկ հնարավորությունները սահմանափակելու հարցում:

Սակայն բանտապետը, որ վնասում կարծես Ստրաուդի նրկվության մի յուրվի կռվի կրողն է, վնջապես խոստովանում է, որ ոչ մի պատ ու պատենջ, ոչ մի բանտային ամենադժոխային պայման մարդուն չի կարող զրկել իր իսկ նվաճած ազատությունից, և ստիպված ասում է. «Ես սովորական բանտապետ եմ... Ինձ սովորական կալանավոր տվիր...»:

Վիպակի վերջում Ջեյթունցյանը նրկատում է Ստրաուդին: Բուրդովին օտար են իրար ծնր և նրիտասարդ Մտրաուդները և պատճառն էլ այստեղ տարիքային տարբերությունը չէ: Եթե նրիտասարդ Ստրաուդը իր մտապատկերներում ունի կյանքի բնական ընթացքը, ապա արդեն վաղուց բանտային կյանքին հարմարված ծնր Ստրաուդի համար ամենայնիվ հարկը չէ պարզված ազատությունը: Եվ Ջեյթունցյանը նրանց նրկխտության միջոցով լիարժեք բացահայտում է նրկու Ստրաուդներից յուրաքանչյուրին սահմանված կյանքի հաշվեհարկը, ուր բարոյական հաղթանակի իրավունքը իրեն է վերապահում ծնր Ստրաուդը. «Իմ հաղթել ես ինձ, Ստրաուդ,- եռանդով սկսեց ապացուցել պատահին:- Ես ընդունում եմ, որ հաղթել ես: Գիտես որն է մեր տարբերությունը: Ես ազատ էի: Իսկ դու նվաճել ես ազատությունը»:

Ահա, այսպես, ըստ էության, տարբեր ճանապարհներով սովորական մահկանացուին հասնուկ խաղաղ ու անվրդով կյանքի են ձգտում Ջեյթունցյանական հերոսները, նրանցից յուրաքանչյուրը փորձելով գտնել իր »նա«-ը: «Ժամանակի նրկու նշանավոր մարդիկ (Լյուդ Ռոբերտ Իզերլի և Բոբ Ստրաուդ՝ Ա.Ղ.), որոնք այդպիսի ճանաչման հստել են հակադիր ուղղություներով,-վերոհիշյալ նրկու վնայնրի գլխավոր հերոսների մասին գրում է գրականագետ Վ.Սաֆարյանը,- այժմ նույնացել են մի կարևոր ընդհանրության հոդի վրա, հեռու ամեն տեսակ ատոմային ժուլքից ու թռչնագիտությունից: Նրանք եղել են կատակերգության ամենատխտուր մարդիկ, այժմ նրագում են ապրել ինչպես ամենասովորական մահկանացուն, դառնալ պարզապես «բաղադրի ամենածայրի տան բնակիչը» և ոչինչ ավելին: Նրանցից յուրաքանչյուրը ծվատվել է՝ «ինքն իրենից դուրս» մարդ լինելով և այժմ փորձում է դառնալ «մարդ ինքն իր մեջ», նաև «ինքն իր համար»⁹:

В данной статье подвергается краткому анализу романы Перча Зейтунцяна "Клод Роберт Изерли" и "Самый грустный человек", в которых романист соединяв исторические факты и реальные документы с фантастикой и условностью, мастерски изобразил художественную хронику двух трагедий XX века.

Պատմության բացահայտումն ու կերպարային մարմնավորումը Պ.Ջեյթունցյանի արձակում

Ա. Լ. Ղուլյան

Ամփոփում

Համառոտ վերլուծության ենթարկելով Պ.Ջեյթունցյանի նրկու վնայնրը՝ «Լյուդ Ռոբերտ Իզերլի» և «Բոբ Ստրաուդ», փորձել ենք տալ դրանց գեղագիտական գնահատականը, որտեղ վիպասանը վարպետորեն իրար է միահյուսել պատմական փաստերն ու իրական դեպքերը ֆանտաստիկայի և պայմանականի հետ:

Выявление и образное воплощение истории в творчестве П.Зейтунцяна

Гулян А.К.

Резюме

⁹ Սովետական գրականություն, 1975 թ., N 8, էջ 167